10.57192/18291864-2024.2-9

Օվսաննա Լ. Նահապետյան

ՍԱՀՄԱՆԱԶԱՆՑՈՒՄԸ ԻԲՐԵՎ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԼԻԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՒՄ

Ինքնահաղթահարող մարդը*

Բանալի բառեր – սահման, սահմանազանցում, մշակութային սահմանազանցում, սոցիալական սահմանազանցում, արգելանք, սահմանազանցող հասարակություն, նոր սոցիալականություն:

Մուտք

Ժամանակակից քաղաքակրթության ոգին բնորոշող գիտական ու տեխնոլոգիական աննախադեպ նվաճումները, կեցության գոյաբանական հիմունքների վիրտուալացումը, մարդկային հարաբերությունների այլակերպումներն ու նմանատիպ այլևայլ երևույթները, որոնք այլևս մեր բնական գոյընթացի մշտական ուղեկիցներն են, պահանջում են նորովի իմաստավորել գոյություն ունեցողի, հնարավորի և թույլատրելիի սահմանների հարցերը: Խնդիրն այն է, որ սրընթաց փոխվող աշխարհում քաղաքակրթական, մարդաբանական ու սոցիոմշակութային սահմաններն ու սահմանագծերն այնքան արագ են փոխվում, կյանքն ինքնին այնքան սահմանազանցական է դարձել, որ երբեմն դժվար է որոշել «այստեղ ու հիմա» ապրող մարդու տարածական ու ժամանակային կոորդինատները:

Այն, որ սոցիալական կյանքին ներքնապես բնորոշ է «բացասման ոգին», և միայն այդ կերպ կարելի է իրականություն դարձնել մարդկային կեցության հնարավորությունները, ինքնին հասկանալի է: Հասկանալի է նաև, որ սոցիալական առկա կեցությանը բնորոշ ինչ-ինչ հանգամանքների կապանքներից ձերբազատվելու և իր իսկ կերտած աշխարհում էկզիս-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.06.2024:

տենցիալ անկախություն ձեռք բերելու համար մարդը «դատապարտված է» լինել սահմանազանցական: Բայց արարման այդ կերպից բխում է նաև մարդու ինքնահաստատման դրամայի **մշակութային վերաերանգավորման** ու **սոցիալական եղանակավորման** ողջ խորությունն ու դրանց սոցիալ-փիլիսոփայական իմաստավորման արդիականությունը:

1. Մարդը որպես սահմանազանցական էակ

Ժամանակակից աշխարհի սոցիոմշակութային հիմունքները այնպիսին են, որ «կապվածությունը», «նստակյացությունն» ու այն ամենը, ինչը չի կարող նպաստել ժամանակի հոսքին համահունչ ընթանալուն, այլևս կայունության, ինքնանույնականացման և հուսալիության երաշխիքներ չեն: Այս իմաստով սահմանազանցումն (transgressio)[1] ու անկայունությունը դարձել են մեր ժամանակշրջանի ամենատարածված, ամենաակնառու երևույթները՝ ձեռք բերելով յուրահատուկ ինստիտուցիոնալ կարգավիճակ, և որպես իմաստային-արժեքային անորոշությունների պայմաններում դրսևորվող վարք, սոցիալական վերահսկողությունից խուսափելու և ժամանակի հոսքին ու ռիթմին հարմարվելու մարտավարություն, նորովի իմաստավորման կարիք ունեն: Բանն այն է, որ ժամանակակից սոցիալական կյանքն ասես երկակի իրականությունների աշխարհ լինի: Կարգն ու կարգի կորուստը, սահմանն ու սահմանազանցումը այլևս դարձել են մեր ժամանակների սոցիալական աշխարհին բնորոշ միաժամանակյա իրողություններ, և մարդկանց կյանքի ու վարքի վրա սոցիալական վերահսկողական մեխանիզմների ներդրմանն ու սոցիոմշակութային կոորդինատների ամրագրմանը զուգահեռ ձևավորվում են նաև հսկողությունից խուսափելու և սահմանազանց լինելու նորանոր այլընտրանքային միջոցներ ու հնարքներ: Այս առումով սահմանն այլևս ոչ թե վերացական եզր է, այլ պայքարի ասպարեզ ու բախումների տարածք, որտեղ հայտնված մարդու սահմանազանցական գործունեությունը ոչ միայն կարող է բարեփոխել ու կատարելագործել սոցիալական իրականությունը, այլև խեղաթյուրել ու հարուցել այլևայլ ճգնաժամեր: Ինչպես գրում է Մ. Ֆուկոն, «Սահմանը և սահմանազանցումը պարտական են միմյանց իրենց

[1] **Սահմանազանցումը** հետարդիականության առանցքային հասկացություններից է, որը ամրագրում է հնարավորի և անհնարինի անանցանելի սահմանը հատելու երևույթը: Հասկացությունը ներդրվել է այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսիք են Ժ. Բատայը, Մ. Բլանշոն, Մ. Ֆուկոն, ինչպես նաև ֆրանսիական փիլիսոփայական դպրոցի այլ ներկայացուցիչներ:

կեցության սերտությամբ. չկա այնպիսի սահման, որը բացարձակապես հնարավոր չէ անցնել, մյուս կողմից էլ պատրանքային սահմանի սահմանազանցումն ունայն է»[23]: Հասարակությունը գնալով դուրս է գալիս կառուցվածքային սահմանափակումներից, և մենք ականատեսն ենք լինում, թե ինչպես են շատերը իրենց թույլ տալիս խախտել իրադարձությունների համընդհանուր ընթացքը, ինչպես նաև վարքի, բարոյականության ընդունված և հաստատված կանոնները:

Բայց մենք դատապարտված ենք մշտապես դիրքավորվել սահմանի վրա, որովհետև մեր գոյության բոլոր ձևերն ու եղանակները գտնվում են այդ «եզրային դիրքերում», որից «երբեք չի կարելի ո՛չ նահանջել, ո՛չ էլ առաջ անցնել»[4]: Սահմանը ոչ միայն մեր գոյությանը որոշակիություն հաղորդող, մեր ինքնությունը ձևավորող ու պահպանող անհրաժեշտ պայման է, այլև ամեն կարգի արգելանքներ ու սահմանափակումներ հաղթահարելու լրացուցիչ շարժառիթ: Բանն այն է, որ որոշակի սահմանի մեջ ներփակվելը թեև մարդուն հնարավորություն է տալիս գոյության սեփական աշխարհը պաշտպանել քաոսից, արտաքին վտանգներից ու ապակառուցողական ներխուժումներից[5], բայց հենց այն պատճառով, որ մարդն աշխարհին ու հանգամանքները իրեն ենթարկելու կամ հարմարեցնելու միջոցով միայն կարող է հաստատել իր գերակայությունը այդ իսկ աշխարհի նկատմամբ, նշանակում է նաև, որ նա **սահմանազանցող էակ** է: Դա նրան հնարավորություն է տալիս դուրս գալ սեփական սահմաններից դեպի իր այլությունը և հասնել ամբողջականության: Այս տեսանկյունից սահմանազանցումը կարելի է դիտարկել որպես վերջավորի սահմաններից դուրս գալու և կեցության լիարժեքության հասնելու ձգտում: Չնայած այն հանգամանքին, որ ցանկացած անհատ կարիքն ունի իր սահմանների, այնուամենայնիվ, նա չի կարող հաշտվել դրանց հետ, քանի որ նրան հաջողվում է հաստատել իր էությունը՝ միայն խախտելով իրեն անհրաժեշտ սահմանները[6]: Խնդիրն այն է, որ մարդու սոցիալական գոյությունը մշտապես ծավալվում է այն սահմանի հետ փոխազդեցության մեջ, որը բաժանում է թույլատրելին անթույլատրելիից: Սահմանը սուբյեկտի՝ ինքն իր հետ անհամապատասխանության կետն է, նրա ակտիվության այն վայրը, որտեղ մարդը փորձում է ապագան վերածել ներկա-

---

[3] **Фуко, М**. О трансгрессии. Танатография эроса: Жорж Батай и французская мысль середины XX века. СП, 1994, с.117.

[4] **Батай Ж**., «Проклятая часть»: Сакральная социология, М., 2006, с. 421.

[5] Տե՛ս **Հարությունյան Էդ**., Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 13:

[6] Տե՛ս **Батай Ж**., Теория религии. Литература и Зло. Мн., 2000 էջ 188:

յի, այսինքն՝սահմանազանցել ներկան[7]: Ակներև է նաև սահմանի պարադոքսալ բնույթը՝ պայմանավորված նրա միջանկյալ կարգավիճակով, քանի որ այն կեցության և չկեցության, ներքինի և արտաքինի, քանակականի և որակականի, ես-ի և ուրիշի, հայտնիի և անհայտի առնչակցության հանդիպատեղն է:

2. Ինքնահաղթահարումը որպես սահմանազանցում

Իբրև վերջավոր ու մահկանացու էակ, մարդն իր կյանքը կառուցում է սոցիալական, բարոյական և այլևայլ նորմերին ու օրենքներին համապատասխան, որոնք նրան այս կամ այլ չափով օտարում են իր իրական կեցությունից: Այդ իսկ պատճառով՝ նա մի կողմից հարկադրված է նորակերպվել ներկայում և ապրել ժամանակին համընթաց, մյուս կողմից, իբրև կյանքի սուբյեկտ, չի կարող մնալ ժամանակի ու հանգամանքների հոսքին ենթակա և պարտավոր է ինքն իրեն ու իրենից դուրս եղածը հաղթահարելու միջոցով «ապահովագրվել ապագայում»: Դա մի հարկադրական անցում է դեպի իրականություն, և իրականն իր բացառիկ դաժանությամբ այն գինն է, որը պետք է վճարվի նրա խաբուսիկ շերտերից մաքրվելու համար: Ինքնահաղթահարման սահմանազանցական այդ նախագծում, ինչպես Նիցշեն կասեր, «Մարդը մի բան է, որ պետք է հաղթահարվի»: Անվանենք այն արարելու կամք կամ՝ ավելի վեհ նպատակի, ավելի բարձրի, հեռավորի ձգտում[8], միևնույն է, մշակույթի, քաղաքակրթության և նրանց համատեքստերում ապրող մարդու նյութական, խորհրդանշական և սոցիալական սահմանափակ հնարավորությունների հաղթահարումը, մեծ հաշվով, սահմանազանցական ակտ է, առանց որի նա չի կարող դառնալ իր կյանքի նախագծի հեղինակն ու իրագործողը: Այս իմաստով սահմանազանցական են ինչպես արտաքին հանգամանքներն ու պայմանները, այնպես էլ՝ ներքին փորձառությունները, քանի որ մարդը ոչ միայն ձգտում է «ինչ-որ բանի», այլ նաև կենտրոնախույս շարժում է «ինչ-որ բանից»: «Այստեղ»-ի և «այնտեղ»-ի միջև լղոզված սահմանը նաև տարածությունն է «այսօրվա» և «վաղվա», «մերի» և «նրանցի», «հնի» և «նորի» միջև:

Կարելի է ասել, որ սոցիալական կյանքի պատմությունը սկսվել է այն պահից, երբ աստվածայինին համազորվելու ներքին մի մղումով

---

[7] Տե՛ս **Бахтин, М.** Собр. сочинений в 7 т. , М., 2003, т. 1, էջ 135:

[8] Տե՛ս **Ницше Ф**. Так говорил Заратустра. Книга для всех и ни для кого, «Полное собрание сочинений в 13 томах», т. 4, М., 2007, էջ 119:

մարդն ընդվզեց նախասահմանված կարգի դեմ և իրեն հռչակեց սահմանազանցական էակ: «Աշխարհի և մարդու հանդիպումը մեր պատմության մեկնակետն է: Դա, եթե կուզեք, բնականի և բանականի, ի վերուստ նախասահմանված կարգի և արարման տքնանքներին ինքնակամ դատապարտվածի հանդիպում էր, որով սկսվեց արարչագործության բնագիր տեքստի սրբագրման, բնականության կարգը բնազանցության կարգին ենթարկելու, մի խոսքով՝ երկնային արքայության նմանությամբ երկրային ձեռակերտ արքայություն ստեղծելու մարդկային արկածների պատմությունը»[9]: Այդ պատմությունը նաև սեփական կյանքն ու ճակատագիրը կերտող այն մարդ–սուբյեկտի ոդիսականի մասին է, ում գոյության իրավունքը պահանջում է **իմանալ, իմաստավորել** ու **գործել:** Ու թեև այդ մարդու կյանքը կառուցված է մահվանը դիմադրող կենդանական ենթահիմքերի վրա, և նա տակավին զոհ է, դահիճ է, գիշատիչ է ու դարանակալ միաժամանակ, ինչպես մյուս կենդանիները, բայց նաև միակն է, ով չի հարմարվել ու չի համակերպվել վերջավոր ու մահկանացու լինելու իր կարգավիճակին և մնալով՝ ինչպիսին կա, ինչպիսին իր ֆիզիկական-մահկանացու մարմնի հնարավորություններն են ընձեռում, միաժամանակ ձգտում է չլինել այն, ինչ՝ էր և լինել այն, ինչ՝ չէր: Մարմնական տառապանքների ու մահվան հանդեպ գերակայություն ունենալու, Անսահմանի ու Անմահության ցնորական ու անբավ փափագը նրան դարձրել են սահմանազանցական ու անդրանցական:

Մարդկային կյանքի բնականոն ընթացքը ենթադրում է կյանքի որոշակի դրվածք կամ, այլ կերպ ասած՝ կայուն պայմանավորվածություններ ու պայմանականություններ, որոնք իրավասու են միայն սոցիոմշակութային որոշակի տիրույթում: Տիրույթի որոշակիությունը կամ իրավասությունների սահմանը բնորոշ է ոչ միայն բնակության տարածքը հասկացած լինելու առանձին վերցրած մարդու հակվածությանն, այլև՝ ցանկացած համակեցությանը: Հակառակ պարագայում ընտանիքը, օջախը, համայնքը, հասարակությունն ու նրա բաղկացուցիչ այլ ենթահամակարգերը կզրկվեն սոցիոմշակութային համատեքստից, որն էլ հենց որոշում է բոլոր կարգի փոխհարաբերությունների «խաղի կանոնները»: Հարկ է նկատել, սակայն, որ սոցիոմշակութային հստակ սահմաններ ենթադրող «նստակյաց» կյանքի մշակույթը աշխարհն ընկալում է որպես «յուրայիններից» և «օտարներից» կազմված կյանքի մի պարզունակ դրվածք՝ սահմանափակելով սոցիալական կյանքի ծավալման բոլոր կարգի էկզիս-

[9] **Հարությունյան Էդ.**, Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 25:

տենցիալ հեռանկարների հավանականությունը: Ինչ խոսք, աշխարհը և նրանում կյանքի դրվածքը երբեք չեն կարող լիովին բավարարել մարդուն, և բոլոր դեպքերում իրեն ոչինչ չխոստացող ու չառաջարկող այդ աշխարհից «փախուստի» յուրաքանչյուր ակտ մարդն ընկալելու է որպես կյանքի նոր հեռանկարների բացահայտման փորձ: Այդ գաղափարախոսությունը տարածության մեջ աշխարհիկ ճանապարհորդության (սահմանազանցման) փոխարեն մարդուն առաջարկեց ժամանակի մեջ «հավատի ճանապարհորդության» (անդրանցականության) անկաշկանդ հնարավորություններ մի աշխարհում, որտեղ նրան մնում էր ապաշխարհել, տոկալ և հուսալ[10]: Իրականում անդրանցականությունը ծնվում է սահմանազանցումից, որպես վերջինիս ինքնահաղթահարում: Մի բան ակնհայտ է, որ սոցիալականի ընդերքում կուտակվող ամբոխի կարգազանցական հակումները արգելափակող բոլոր կարգի գաղափարախոսությունների համատեքստը զոհողություն պահանջող «այնտեղ ու հետո» սպասվելիք լուսավոր հեռանկարն է, որը մարդկությանը կտա նոր նպատակներ ու հորիզոններ:

Ազատության նման ընկալումն ինքնին ենթադրում է կյանքը վերածել սահմանազանցական շարժի՝ նախորդի ժխտման, որը հաջորդ պահին կժխտվի իր հաջորդի կողմից՝ ստեղծելով անվերջության ու անսահմանության պատրանք[11]: Ուստիև հավակնություններից մինչև դրանց բավարարումը ընկած ժամանահատվածում կանգառ-սպասումը այլևս ինքնության ձևավորման աղբյուր չէ, ինչպես մոդեռնի ժամանակ էր. այժմ արդեն նպատակին հասնելու ժամանակը «կրճատվել» է, և «սպասման վախն» ու անորոշությունը մարդուն դրդում են անվերջ ինքնասահմանազանցման: Նույն բանը կատարվում է նաև իրերի հետ. նրանք ևս դառնում են կարճաժամկետ օգտագործման օբյեկտներ:

Սոցիալական ամբողջի հատվածականացումը, սոցիալականի զարգացման տարատեսակ սցենարների առկայությունը, գաղափարախոսության՝ որպես սոցիալականի արտահայտման և սոցիալական ինքնության դրսևորման միջոցի, դերի անտեսման մտայնությունը այն ամենն է, ինչին առնչվում է ժամանակակից մարդկային հասարակությունը, և եթե գաղափարախոսությունը այլևս չի ընկալվում որպես սոցիալական նույնականության ձևավորման եղանակ և եթե նույնականությունը չենք ամրագրում գաղափարական համակարգի մեջ, ապա սոցիալականը կնույնանա տարբերությունների անվերջ խաղի հետ:

---

[10] Տե՛ս **Հարությունյան Էդ.**, նույն տեղում, էջ 69:

[11] Տե՛ս **Jabes E.** Book of Margins. Chicago, 1997, էջ 16.

Մարդ–սուբյեկտը նման է մի դերասանի, որն ամեն օր խաղում է միևնույն դերը միևնույն ներկայացման մեջ: Այս իմաստով կարելի է ասել, որ սոցիալականը բեմականացման տարածություն է, իսկ հասարակությունը՝ հանդիսատեսների հանրություն [12]: Դա նշանակում է, որ մարդը ինքն իր հետ կոնֆլիկտի մեջ է, քանի որ մշտապես փորձում է հարմարվել ընդունված մոդելներին: Բայց այն մարդը, որն իրեն չի նույնացնում կյանքի կազմակերպման այս կամ այլ մշակույթի հետ, որը մշտապես խախտում է սոցիոմշակութային սահմանները, ստիպված է միաժամանակ ապրել երկու աշխարհներում, մեկ՝ որպես յուրային, մեկ՝ որպես օտար:

3. Սոցիալական և մշակութային սահմանազանցում

Մինչև վերջերս տիրապետող էր այն տեսակետը, թե սոցիալական առաջընթացը հնարավոր է միայն նստակյաց ապրելակերպի պարագայում, որոշակի սահմանների մեջ ներփակված վիճակում (սեդենտարիզմ)[13]: Ժամանակակից իրողությունները ձևավորել են հետարդիական մարդու մի նոր ապրելակերպ, որին բնորոշ չէ նստակյաց կենսակերպը: **Աշխարհը կորցրել է իր տարածական սահմանները և ժամանակակից մարդը դարձել է «քոչվոր» ու ստիպված է թափառել, որպեսզի իր աննպատակ դեգերումներին հաղորդի նպատակաուղղված շարժման տեսք, իսկ անցած երթուղին մեկնաբանի որպես ազատություն ձեռք բերելու փորձ:**

Սահմանազանցականության այս նոր ու համատարած դրսևորմանը բնորոշ է երկու ուղղվածություն՝ **սոցիալական,** որի դեպքում սահմանազանցումը ընկալվում է որպես ինքնության ու նույնականության կորուստ, և **գոյաբանական,** որի դեպքում սահմանազանցումը ընկալվում է որպես նպատակներին այստեղ ու հիմա արագորեն հասնելու ռեակցիա, ինչն էլ իր հերթին հարուցում է ժամանակի ու տարածության նոր ընկալումներ ու ապրումներ: Իր գոյության ամեն պահին մարդը դեռևս ինքը չէ, որովհետև ինքն իր հետ մշտապես գտնվում է մրցավազքի մեջ՝ չհասցնելով ապրել «այստեղ և հիմա» ժամանակահատվածը՝ մշտապես սպասելով սեփական լինելիության ցանկալի տարբերակի հետ հանդիպմանը: Ուստի մարդը միշտ ենթարկվում է անհանգստության, քանի որ ստիպված է իրեն անընդհատ պատկերացնել ապագայում՝ իր գործունեության

[12] Տե՛ս **Де Бор Г**. Общество спектакля, М., «Праксис», 2000. էջ 93:

[13] **Սեդենտարիզմ** – անգլերեն «sedentary» – «նստակյաց:

ակնկալվող արդյունքների միջոցով: Բայց այս գործընթացը երբեք չի կարող կանգ առնել, քանի որ ներկան չունի այն իմաստը, ինչ մարդը իր հայեցողությամբ վերագրում է ապագային: Այս պարագայում սահմանազանցումը մարդուն տալիս է բավարարվածության զգացում «այստեղ և հիմա» ժամանակահատվածում՝ սեփական հայեցողությամբ գործելու հնարավորությունից: Բանն այն է, որ **եթե մոդեռնի դարաշրջանում խնդիր էր ինքնության ձեռք բերումն ու պահպանումը, ապա հետմոդեռնի դարաշրջանում ինքնությունը վերափոխվում է յուրատեսակ մի խաղի, բեմադրության**, որի սցենարը մշտապես փոխվում է, և անձից պահանջվում է անել ամեն ինչ՝ այն չամրագրելու և իրեն չզրկելու ընտրություն կատարելու հնարավորությունից[14]:

Իբրև «ինչ-որ բանից» կենտրոնախույս շարժում, սահմանազանցումը անհատներին տեղափոխում է մի մշակույթից մյուսը, ավանդականից, միատարրից դեպի քաղաքակրթության հետարդիական, բազմամշակութային, բազմակարծության տարածք, որը բաց է բազմազանության համար: Սակայն սովորաբար լինում են դեպքեր, երբ լքելով հայրենի մշակույթը և հատելով նորմատիվ ու առանցքային սահմանները՝ անհատներն ու նրանց ստեղծած խմբերը չեն հասնում նոր կարգի, չեն անցնում սահմանները նախասահմանված ուղղությամբ, այլ մնում են արժեքային երկու համակարգերի մեջտեղում կամ հայտնվում «ոչ մի տեղում», ինչպես օվկիանոսի անորոշության ու անհայտության մեջ օրորվող նավը, որը չի կարողանում հասնել մոտակա ցամաքին: Հետևաբար սահմանազանցումը շատ դեպքերում ծուղակ է, որը հանգեցնում է լուսանցքայնության, օտարման և սոցիալ-մշակութային այլ բացասումների: Ընդ որում, մշակույթի սահմանները, որոնք սահմանված են բարոյական կամ իրավական չափանիշներով, սահմանազանցման միջոցով մշտապես կասկածի տակ են դրվում ինչպես անհատների, այնպես էլ՝ սոցիալական խմբերի կողմից:

Յուրաքանչյուր հասարակություն պահպանում է իր շարունակականությունն ու կայունությունը մշակույթի շնորհիվ: Ընդ որում, սահմանազանցումն ուղղված չէ մշակույթի դեմ, այլ նպատակ ունի դուրս գալ վերջինիս սահմաններից: Եթե սոցիալական սահմանազանցումը հատում է սահմաններ, ոչ միայն դրանք չքանդելով, այլև ևս մեկ անգամ հաստատելով վերջիններիս գոյության անհրաժեշտությունը, ապա մշակութայինը

[14] Տե՛ս **Де Бауман З**. От паломника к туристу, «Социологический журнал»,. 1995. N 4. էջ 134:

ոչ միայն մատնանշում է այդ սահմանների անկատարությունը, այլև առաջարկում է նոր սահմանագիծ: Պարզ է, որ սահմանազանցման երկու տիպերը (սոցիալականը և մշակութայինը) բխում են մարդկային էությունից, իրականության հանդեպ նրա ունեցած դժգոհությունից. մի դեպքում դա սոցիալականի տեղի ու դերի նույնականացման, մյուս դեպքում՝ մտքի ազատության և ստեղծագործական կարողությունների, ներուժի իրացման ձգտումն է: Ընդհանուր առմամբ, մարդն ինքն իրեն որպես անհատ գիտակցում է չբավարարող պայմանների դեմ ապստամբելով: Ինչպես գրում է Մ. Բլանշոն, «Մարդը հասնում է բավարարվածության, երբ համարձակվում է անդադար դժգոհել: Նա հասնում է սեփական կատարելությանը՝ գնալով ինքնաժխտման եզրագծով»[15]: Եվ այս առումով ցանկացած սահմանազանցող արարք, ստացվում է, մարդու ընդվզող էության դրսևորում է, որում արտահայտվում է նրա անձնական ինքնիշխանությունը, այսինքն՝ «ինչը մարդու կյանքում հակադրվում է ստրկությանը կամ ենթակայությանը»[16]: Կարելի է ասել, որ ինքնիշխանությունն այս կամ այն չափով բնորոշ է բոլոր մարդկանց և ներկայացնում է սեփական կամքին համահունչ գործելու կարողությունը, որը հաճախ ուղեկցվում է հանրային կարգի ընդունված նորմերի խախտումներով, ինչպես նաև՝ ցնցումներով: Այս առումով ինքնիշխանությունն ու սահմանազանցումը, ստացվում է, փոխպայմանավորված երևույթներ են, որոնց շնորհիվ մարդը երբեմն կարող է արտահայտել իր բնական ներկա էությունը՝ առանց մարդկայինը կորցնելու վտանգի: Ինքնիշխանությունը, կարող ենք ասել, սահմանազանցման հիմքն է ու պայմանը, քանի որ միայն դրա շնորհիվ է սահմանազանցումը դառնում հնարավոր: Յուրաքանչյուր դեպքում անհատը նման արարքով ռիսկի է դիմում, բայց այդ ռիսկն ավելի է մեծանում, եթե նա վախենում է այն դրսևորել որպես անվճռականության պատիժ՝ ստանալով ձախողված ճակատագիր և իմաստազուրկ կյանք: Ինչպես գրում է Ժ. Բատայը, սահմանազանցումը մշտապես ենթադրում է փոթորիկ՝ ընդգծելով, որ «Փոթորիկն այն մարդու ճակատագիրն է, որը պայմանավորված է որոշակի նախադրյալներով և իր մեջ կրում է ոչ միայն անձնական և համընդհանուր կեցության նախապայմանները, այլև բոլոր մարդկանց՝ իրենց կացությունից դուրս գալու, մերժման համընդհանուր ցանկությունը»[17]: Ինքնիշխանության շնորհիվ է, որ մարդը կարողանում է կասկածի տակ դնել իրերի գոյություն ունեցող կարգի օրինականությունը, կասկա-

[15] **Бланшо, М.,**. Опыт-предел, նույն տեղում, с. 68.
[16] **Батай Ж.,** Проклятая часть: сакральная социология. М., 2006, с. 313.
[17] Նույն տեղում, էջ 421:

ծի տակ դնել տիեզերքը սահմանափակող շրջանակի գաղափարի հիմնարարությունը: Եվ որքան բարձր է որոշակի անձին բնորոշ ինքնիշխանության մակարդակը, այնքան ավելի բարձր է սահմանազանցում կատարելու նրա հակումը: Ինքնիշխան անհատականությունն ազատագրված մարդն է, ով ազատորեն տնօրինում է իր կամքը և ցանկացած պահի պատրաստ է ընդվզել համընդհանուր արժեքների դեմ, եթե դրանք չեն համապատասխանում իր ցանկություններին: Սա լիակատար անկախության վիճակ է ամեն ինչից՝ օրենքներից, բարոյական պահանջներից, հասարակության մյուս անդամների հանդեպ ունեցած պարտավորություններից: Հարկ է նկատել, որ մշակութային սահմանազանցում կատարելու համար անձը պետք է ունենա ինքնիշխանության ավելի մեծ աստիճան, քան կպահանջվի սոցիալական սահմանազանցման ժամանակ, ինչը պայմանավորված է դրա ստեղծագործականությամբ: Հիրավի օտար մշակույթն իրեն ավելի լիարժեք և խորը բացահայտում է մեկ այլ մշակույթի աչքերում: Մի իմաստը բացահայտում է իր խորքերը՝ հանդիպելով և շփվելով մեկ այլ, օտար իմաստի հետ. նրանց միջև սկսվում է երկխոսություն, որը հաղթահարում է մշակույթների մեկուսացումն ու միակողմանիությունը: Մենք օտար մշակույթին այնպիսի հարցեր ենք տալիս, որոնք նա ինքն իրեն չի տվել: Այդ պատասխանները բացահայտում են օտար մշակույթի նոր կողմերը և իմաստային խորքերը: Երկու մշակույթների նման երկխոսության պայմաններում նրանք չեն միաձուլվում կամ խառնվում, յուրաքանչյուրը պահպանում է իր միասնությունն ու ամբողջականությունը՝ փոխադարձաբար հարստացնելով միմյանց[18]:

Ակնհայտ է, որ ժամանակակից հասարակությունը գնալով հեռանում է կառուցվածքային սահմանափակումներից, և սոցիալական տարածության վիրտուալացումն արդեն թույլ է տալիս խոսել ժամանակակից «սահմանազանցող հասարակությունից»: Ինչպես գրում է Մ. Էպշտեյնը, «Մարդն այլևս երկչոտ առաջնելույթ ունեցող է ցանցային փոխակերպումների քաղաքակրթության բեմում: Վիրտուալ աշխարհում մարդու նավարկումների համար հանգրվանի ափ այլևս գոյություն չունի»[19]: Կարող ենք փաստել, որ, գիտական առաջընթացի շնորհիվ, «այլմոլորակայիններն» արդեն մեր շարքերում են: Մարդն իր գործառույթները կամավոր փոխանցում է մեքենային: Այս իմաստով՝ մարդը սահմանազանցում է իր կենսատեսակի սահմանները, ընկալում և փոխակերպում է աշխարհն այն

---

[18] Տե՛ս **Батай Ж.,** Проклятая часть: сакральная социология. М., 2006, էջ 354:

[19] **Эпштейн, М. Н**., Début de siècle, или От пост- к прото-. Манифест нового века «Знамя», 2001. – N 5., с. 184.

միջակայքում, որտեղ նախկինում միայն մեքենան է կարողացել թափանցել: Համացանցի հնարավորությունների ու տարատեսակ տեխնիկական նորարարությունների միջոցով վիրտուալ իրականությունը վերածվել է ժամանակակից մարդու գոյության կարևոր միջավայրի, այսպես ասած՝ կյանքի ևս մեկ սցենարի, որտեղ համագոյակցում են բնօրինակն ու պատճենը: Վիրտուալի և իրականի այս խառնաշփոթում մարդն արդեն ապրում է սիմուլյակրային արհեստական միջավայրում: Նման «կրկնօրինակների և պատճենների աշխարհը», պարզվում է, մարդու համար ավելի առաջնային է և, տրամադրելով վարքագծի հստակ և միանշանակ մոդելներ (ինչը բացակայում է սոցիալական իրականության մեջ), իմաստալից բովանդակություն է հաղորդում մարդկային կյանքին:

Թեև սահմանազանցումը հաճախ կարող է ցնցել սոցիալական իրականությունը, անառարկելի է, որ սահմանազանցումը հաստատում է մարդկային անհամաձայնության ազատությունն ու նորարարության հնարավորությունը: Այս առումով սահմանազանցումն իրականություն դարձած ազատություն է, ինչը անհատին լիցքավորում է հսկայական էներգիայով և նրան դրդում համարձակ արարքների՝ դառնալով մշակույթի շարժիչ ուժը: Թե ինչ ուղղություն կունենա այդ էներգիան՝ դեպի արարում, թե ոչնչացում, կախված է ինչպես սոցիալական միջավայրի ազդեցությունից, այնպես էլ մարդուն առաջնորդող գաղափարներից, նպատակներից և իդեալներից:

Օվսաննա Լ. Նահապետյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է սոցիալական փիլիսոփայությունը, տրամաբանությունը, ստեղծագործության տեսությունը:

Էլ. հասցե՝ onahapetyan@ysu.am

Summary

TRANSGRESSION AS A STRIVING FOR THE FULLNESS OF BEING

Man overcoming himself

Ovsanna L. Nahapetyan

Key words - boundary, transgression, cultural transgression, social transgression, prohibition, transgressing society, new sociality.

Unprecedented scientific and technological achievements that define the spirit of modern civilisation, virtualisation of ontological foundations of being, distortion of human relations and other similar phenomena that are no longer constant companions of our natural existence, require a new comprehension of questions about the boundaries of the existent, the possible and the permissible. The problem is that in our rapidly changing world, civilizational, anthropological and socio-cultural boundaries and borders are changing so rapidly that life itself has become so transgressive that it is sometimes difficult to define the spatial and temporal coordinates of a person living "here and now". That the "spirit of negativism" is intrinsic to social life and is the only way in which the possibilities of human existence can be realized, goes without saying. It is also clear that in order to free oneself from the shackles of some circumstances inherent in existing social existence and to find existential independence in a self-created world, man is "doomed" to be transgressive. But from this mode of creation also derives all the depth of the cultural colouring and social modality of the drama of human self-assertion and the relevance of their socio-philosophical comprehension. It is becoming increasingly problematic to consider social order as a measure of the organization of social life, and this is because societies are exceeding their structural limits and their members are allowing themselves to cross seemingly inviolable boundaries and to violate the accepted course of events as well as behaviours, morals, and established norms. In this situation, the fundamental boundaries of humanity are undermined and sometimes even erased, making the issue of boundaries more pressing than ever.

Although transgression can often shock social reality, it cannot be denied that, at the same time, it confirms the freedom of human dissent and the possibility of innovation. We can say that crossing the border is freedom realized. The ability to overcome limitations fills a person with enormous energy, which can push him to bold action. However, what direction this energy will take towards creation or

destruction depends on the influence of the social environment as well as the human motives, ideas, goals, and ideals that guide it. He can be overcome by the desire to create, improve, control, destroy, and capture.

Резюме

ТРАНСГРЕССИЯ КАК СТРЕМЛЕНИЕ К ПОЛНОЦЕННОСТИ БЫТИЯ

Человек, преодолевающий себя

Овсанна Л. Нагапетян

Ключевые слова - граница, трансгрессия, культурная трансгрессия, социальная трансгрессия, запрет, трасгрессирующее общество, новая социальность.

Беспрецедентные научные и технологические достижения, определяющие дух современной цивилизации, виртуализация онтологических основ бытия, искажение человеческих отношений и другие подобные явления, которые больше не являются постоянными спутниками нашего естественного существования, требуют нового осмысления вопросов о границах существующего, возможного и допустимого. Проблема в том, что в нашем стремительно меняющемся мире цивилизационные, антропологические и социокультурные границы меняются так быстро и сама жизнь стала настолько трансгрессивной, что иногда трудно определить пространственные и временные координаты человека, живущего «здесь и сейчас». То, что «дух негативизма» внутренне присущ социальной жизни, и только так возможности человеческого существования могут быть реализованы, само собой разумеется. Также понятно, что для того, чтобы освободиться от пут каких-то обстоятельств, присущих существующему социальному бытию, и обрести экзистенциальную независимость в созданном им самим мире, человек «обречен» быть трансгрессивным. Но из этого способа творения также вытекает вся глубина культурной окраски и социальной модальности драмы самоутверждения человека и актуальность их социально-философского осмысления. Становится все более проблематичным рассматривать социальный порядок как меру организации социальной жизни, и это происходит потому, что общества выходят за рамки своих структурных ограничений, а их члены позволяют себе пересекать, казалось бы, незыблемые границы и нарушать принятый ход событий, а также утвержденные нормы поведения, морали. В этой ситуации

фундаментальные границы человечества подрываются, а иногда даже стираются, что делает вопрос границ более актуальным, чем когда-либо.

Несмотря на то, что трасгрессия часто может шокировать социальную реальность, нельзя отрицать, что она в то же время подтверждает свободу человеческого инакомыслия и возможность инноваций. Можно сказать, что пересечение границы – это реализованная свобода. Способность преодолевать ограничения наполняет человека огромной энергией, которая может подтолкнуть его к смелым действиям. Однако то, какое направление примет эта энергия, в сторону созидания или разрушения, зависит от влияния социальной среды, а также от направления человеческих мотивов, идей, целей и идеалов, которые ею руководят. Им может овладеть желание творить, созидать, улучшать, а также управлять, разрушать, захватывать.

Օգտագործված գրականություն

1. **Հարությունյան Էդ.**, Մարդկային կեցության այլակերպումները, Եր., ԵՊՀ հրատ., 2018:
2. **Батай Ж**., «Проклятая часть»: Сакральная социология, М., «Ладомир», 2006.
3. **Батай Ж**., Теория религии. Литература и Зло. Мн., «Современный литератор», 2000.
4. **Бахтин, М.** Собр. сочинений в 7 т. , т. 1, «Русские словари», М., 2003.
5. **Бауман З**. От паломника к туристу, «Социологический журнал. N 4, 1995.
6. **Бланшо, М.,**. Опыт-предел, Танатография эроса: Жорж Батай и французская мысль середины XX века. СП, «Мифрил», 1994.
7. **Де Бор Г**. Общество спектакля. М.: «Праксис», 2000.
8. **Фуко, М**. О трансгрессии, Танатография эроса: Жорж Батай и французская мысль середины XX века. СП, «Мифрил», 1994.
9. **Ницше Ф**. Полное собрание сочинений : в 13 т. Т. 4: Так говорил Заратустра. Книга для всех и ни для кого. М., Культурная революция, 2007.
10. **Эпштейн, М. Н**. Début de siècle, или От пост- к прото-. Манифест нового века «Знамя». N 5, 2001.
11. **Jabes E.** Book of Margins. Chicago, 1997.

REFERENCES

1. **Bataj Zh.,** “Prokljataja chasr”: Sakral'naja sociologija, M., “Ladomir”, 2006 (**In Russian**).
2. **Bataj Zh.,** Teorija religii. Literatura i Zlo. Mn., “Sovremennyj literator», 2000 (**In Russian**).
3. **Bauman Z.,** Ot palomnika k turistu “Sociologicheski jurnal”, 1995 (**In Russian**).
4. **Baxtin M**., Sobr. Sochinenij v 7 t., t. 1, M., “Russkie slovari”, 2003 (**In Russian**).
5. **Bauman Z**. Ot palomnika k turistu, “Sociologicheskij zhurnal”, N 4, 1995 (**In Russian**).
6. **Blansho M.,** Opyt-predel, /Tanatografija erosa: Zhorzh Bataj i francizskaja misl' serediny XX veka. SPb, “Mifril”, 1994 (**In Russian**).
7. **De Bor G**., Obsh’hestvo spektaklja, M., “Praksis”, 2000 (**In Russian**).
8. **Fuko M.,** O transgressii // Tanatografija erosa: Zhorzh Bataj i francizskaja mysl' serediny XX veka. SPb, “Mifril”, 1994 (**In Russian**).
9. **Epshtejn, M.,** Début de siècle, ili Ot post- k proto-. Manifest novogo veka , N 5 “Znamja”, 2001 (**In Russian**).

10. **Harut‘yunyan Ēd. A.**, Mardkayin kets‘ut‘yan aylakerpumnerě, Yer., YePH hrat, 2018 (**In Armenian**).
11. **Nitshe F.,** Polnoe sobranie sochinenij: v 13 t., T.4: Tak govoril Zaratrustra, Kniga dlya vsekh i ni dlja kogo. M., “Kul‘turnaja revoljucija”, 2007 (**In Russian**).